

**ST. JAMES OF NISIBIS ARMENIAN APOSTOLIC
ORTHODOX CHURCH**

ՍԲ. ՅԱԿՈԲ ՄՐԲՆԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Reverend Father Hovhan Khoja-Eynatyan, Pastor

Deacon Larry Farsakian, Sacristan

816 Clark Street, Evanston, IL 60201

Tel: 847-864-6263, e-mail: office@stjamesevanston.org


www.stjamesevanston.org

ՄԱՐՏ 7, 2021

MARCH 7, 2021

SUNDAY OF THE STEWARD

ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ



Armenian Historical Year 4513 (ՏՇԺԳ)-Armenian Calendrical Year 1470 (ՌՆՀ)

Night Hour	9:00 AM
Sunrise Hour	10:30
Holy Badarak	10:30 AM
Bible Readings	Isaiah 56:1-57:21; Ephesians 4:17-5:14; Luke 16:1-31

ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏ 7, 2021

Գիշերային ժամ	9:00
Արևուստային ժամ	10:00
Սուրբ Պատարագ	10:30
Ընթերցումներ	Եսայի 56:1-57:21; Եփեսացիներուն 4:17-5:14; Դուկաս 16:1-31

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ – HOKEHANKISD - REQUIEM SERVICE*Scripture Reading: Gospel of John 12:24-26 (Page 59)*

For the soul of

John "Jano" Tahan (40 days)**PLEASE PRAY FOR OUR SICK**

Alexander Adajian	Michael Green	Dn. Hagop Papazian
Saro Anbarchian	Nargez Hamayak	Nanci Perkhaus
Andre, Servant of God	Fred Harburg	Sofia Petrosyan
Naringul Caliscan	Leo Harootyan	Antony Puckett
Carolyn Conger	Robert Lapointe	Virgie Jandegian Saskowski
Veronica Dadourian	Melina Loloyan	Surpik Simon
Sam Davidson	Pat McCoy	Vigen Ter-Avakian
Seda Dilanjian	Cassandra Mitchell	Milan Thakkar
Linda Farsakian Wall	Varvara Movsesyan	Terre Tuzzolino
Rick Gergerian	Joy Nazarian	Kary Valenziano
Vartges Goorji	Shirley Omartian	Dina Youna
Hoyle Green		Carla Ziegler

If you know of anyone that needs our special prayers, please call the church office (847) 864-6263 or Der Hovhan (847) 644-7389 so that their names can be included on this list or if a name should be removed.

NAME DAY CELEBRATIONS

Whenever you know a friend or loved one whose Name Day/Feast Day is soon to be celebrated, honor the person by presenting them with a lit candle saying, "Anoonovut abrees" or "Anoonovut dzeranas" ("May you grow old with your name"). Or you can simply say, "Happy Name Day!"

NAME DAY celebrated this week: *Mardiros, Martik, Manoug (March 13)*

MAS

MAS (Antidoron) is very thin unleavened bread of wheat, of any reasonable size making it possible to be baked on a metal tray. It can be made by any member of the congregation. It is distributed after the Liturgy to those of the congregation who have not received communion. It is customary to take mas to the members of one's family and to friends, who have been unable to attend the Liturgy. *Mas* symbolizes the bond of love among the members of the church.

Mas, meaning "a portion", represents the remaining part of the loaf which the faithful used to bring to Church in ancient times to be used as bread for the Eucharist. A fraction (*nshkhar*) of this loaf was taken to consecration, while the remainder was distributed among the congregation at the end of the Liturgy.

*Tiran Abp. Nersoyan,
"Divine Liturgy of the Armenian Apostolic Orthodox Church"*

BADARAK PEW BOOKS

Dear Parishioners, as a precautionary measure we have collected the pew books that were previously used to follow Badarak. We are happy to inform you that the electronic version of the book is available in our DESILK mobile app

The app is available for both Apple and Android devices.

Android users can download the app from Google Play store.



Apple users scan the code below.



DESILK connects users to a variety of helpful resources: details about upcoming events, the latest posts on St. James' Facebook page, photo galleries and other relevant content. You can share the link to the app via Twitter, Facebook or email.

ST. JAMES ARMENIAN CHURCH SUNDAY SCHOOL
Academic Year 2020-2021

EVERY SUNDAY
All ages are welcome!

Classes are being offered via Zoom.

GREAR LENT

THE CLOSED ALTAR (*PAGYAL KHORAN*)

Great Lent begins on Monday. The altar curtain will remain closed for the forty days. In addition to the drawn altar curtain, Holy Communion will not be offered during Divine Liturgy until Palm Sunday. (Should anyone desire Holy Communion during Great Lent due to illness or some other emergency, please contact Father Hovhan for special dispensation.)

In addition to these two major changes, the following changes will also take place during the celebration of Divine Liturgy throughout the period of Great Lent:

- There will be no Kiss of Peace.
- The Holy Gospel Book will not be venerated after service.
- The organ will not be played as congregants are departing from the sanctuary at the end of service.
- Congregants will remain silent when exiting the sanctuary after worship to respect those who remain to offer devotional prayers.
- Wedding are not celebrated.

To read more about the Great Lent visit our website www.stjamesevanston.org.

JOURNEY TO PASCHA

2021 Great Lent

Vigils on Wednesdays, March 10, 17, 24

7:00 PM

Peace and Rest Services

ԴԵՊԻ ՉԱՏԻԿ

Ժամանակացոյց

2021 Մեծ Պահքի Արարողություններու

Զորեշարքի

Մարտ 10, 17, 24

Երեկոյեան ժ. 7-ին

FEASTS AND FASTS

March 8- 13

Fourth Week of Great Lent. Fast

March 10

Median Day of Great Lent (Meejeenk)

March 13

Commemoration of the Forty Holy Martyrs

FEASTS AND FASTS

SUNDAY OF THE STEWARD

The fourth Sunday of Great Lent is called the Sunday of the Steward, and the message of the day comes from the Parable of the Unjust Steward. This Parable is mentioned only in the Gospel of St. Luke (16:1-13). In the Parable, a wealthy man learns that the steward of his house (the supervisor of his holdings) is squandering his possessions. The rich man, then, calls forth the steward and asks for an accounting of his possessions, having already decided to release him from employment.

The steward, realizing that he may soon be without work, begins to act properly so that in the near future, if he is indeed fired, others may accept him into their homes. He calls forth those men who are in debt to his employer and relieves them of certain portions of their debts. Upon learning of this ploy, the wealthy man praises the steward for his contrivance rather than chastising him for it.

At first glance, there appears a great contradiction in the master's commendation. But the unjust steward grants back to the debtors only that which he had added to the original debt owed his master for his own gain. Thus, the wealthy man is not injured by the actions of his steward. The master praises the steward for foregoing the gains he would have otherwise realized through these improper transactions. Here, high praise is given not only for the steward's just behavior but for his resignation and his abstaining from future sinful behavior, personal qualities that are at the heart of the self-sacrifice we make during Great Lent.

Thus, Lent teaches mankind about the ability we each have to resign ourselves from all forms of temptation, the beginning of which is self-control and self-denial, even if we have been living sinfully. Christ says, "If any man will come after me, let him deny himself and take up his cross and follow me" (Matthew 16:24). This parable reminds every one of us that the journey towards salvation must include self-control and resignation. The allegorical meaning of the parable involves the wealthy man symbolizing God and the unjust steward symbolizing the sinner. For an extended period of time, the sinner carelessly wastes the graces granted by God until God finally calls him forth for an accounting of his life. The unjust steward symbolizes all of us who, upon regretting our own actions, forgive those who have sinned against us and become true seekers of righteousness and justice.

ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի չորրորդ կիրակին կոչվում է Տնտեսի, ըստ այդ օրվա խորհուրդը բացատրող անիրավ տնտեսի մասին առակի: Այն հիշատակում է միայն Դուկաս ավետարանիչը, որի բովանդակությունը հետևյալն է: Մի մեծահարուստ իմանում է, որ տնտեսը վատնում է իր ունեցվածքը, կանչում է նրան եւ հաշիվ պահանջում, որոշում հեռացնել աշխատանքից: Տնտեսը հասկանում

է, որ կարող է անգործ մնալ, խորամանկության է դիմում: Նա կանչում է տիրոջ պարտապաններին, նրանց շնորհում իրենց ունեցած պարտքի մի մասը: Եվ այս ամենից հետո տերը գովում է տնտեսին՝ հնարամտությամբ վարվելու համար: Առաջին հայացքից թվում է, թե հակասություն կա այս գովեստի մեջ: Բայց անհրավ տնտեսը պարտապաններին շնորհում է այն, ինչն ավելիով գրել էր իր օգտին՝ պարտքի շնորհումով՝ ոչ մի վնաս չպատճառելով իր տիրոջը: Տերը գովում է տնտեսին՝ իր հասանելիք շահույթից հրաժարվելու համար: Այսինքն՝ հույժ գովելի է հրաժար-ումը, որն էլ հենց պահքի իմաստն է:

Պահքը մարդուն որեւէ գայթակղությունից հրաժարվելու ունակություն է սովորեցնում, հրաժարում, որից սկսվում է ինքնազսպումը կամ անձի ուրացումը: Քրիստոս ասում է. «Եվ ով իր խաչը չի վերցնում ու Իմ ետև-ից չի գալիս, Ինձ արժանի չէ» (Մատթ. 10:38): Այս առակը հորդորում է յուրաքանչյուրին հրաժարվելով և ինքնազսպմամբ հասնել փրկութ-յան: Առակի այլաբանական իմաստն այս է: Հարուստ մարդը խորհրդ-անշում է Աստծուն, անհրավ տնտեսը՝ մեղավորին, որը երկար ժամ-անակ անհոգ կերպով վատնում էր Աստծո տված շնորհները, մինչեւ որ Աստված նրան պատասխանատվության է կանչում: Անհրավ տնտեսը խորհրդանշում է այն բոլոր մարդկանց, ովքեր զոջում են, ներում իրենց պարտապանների պարտքերը եւ սիրելի դառնում հրեշտակներին ու արդարներին:

COMMEMORATION OF THE FORTY HOLY MARTYRS

The Forty Holy Martyrs who perished c. 320 AD were Christians from various towns and cities of Lesser Armenia. They served as soldiers in the royal regiment of Sebastia. Upon the decree of the Roman Emperor Likianos, interrogations were organized by Lucias, Duke of Caesarea, to discover the Christian soldiers. Forty of the soldiers remained steadfast in their faith, defied the judges by their brave answers and were imprisoned. On a cold winter night, the soldiers were thrown into a lake near Sebastia to freeze them to death.

At dawn, halos are seen encircling the heads of the soldiers. One of the guards charged with the execution of the forty, upon witnessing the holy phenomenon, accepts Christ and throws himself into the lake to be martyred along with the others. In the morning, it becomes apparent that through a divine miracle, the forty soldiers have been saved from freezing. This infuriates their captors who execute them thus making them martyrs. (One of the forty soldiers, being unable to endure the torments, comes out of the water and finds refuge in a bathhouse built on the banks. The lone soldier dies and is deprived of both earthly and heavenly life.)

The martyrs' remains are buried in Sebastia, where subsequently a forty-domed Cathedral is built. The Cathedral of Sebastia stood for nearly one thousand years until the invasion of Tamerlane and the Mongols at the end of the 14th Century. The name Forty Martyrs Cathedral has survived to this day.

ՍՈՒՐԲ ԲԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿԱՆՅ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

4-րդ դարի սկզբին նահատակված 40 վկաները Փոքր Հայքի տարբեր քաղաքներից էին և զինվորական ծառայության մեջ էին Սեբաստիա քաղաքի կայսերական գնդում: Երբ Լիկիանոս կայսեր հրամանով Կեսարիայի դուքս Լյուսիասը հարցաքննում է՝ բանակում քրիստոնյա զինվորներ հայտնաբերելու նպատակով, նրանցից 40-ը, հավատարիմ իրենց հավատին, անվեհեր պատասխաններով դատավորների գայր-ույթն են առաջացնում և բանտարկվում: Չմեռային մի ցուրտ զիշեր նրանց նետում են Սեբաստիա քաղաքի մոտ գտնվող լիճը: 40-ից միայն մեկը չի կարողանում տանջանքներին դիմանալ: Դուքս ելնելով սառց-ակալած ջրից, նա փորձում է փրկություն գտնել լճափին կառուցված տանը, սակայն կնքելով մահկանացուն, զրկվում է թե՛ երկրային, թե՛ երկնային կյանքից: Լուսադեմին մյուս բոլոր նահատակները երևում են լուսե պսակներով զարդարված: Պահապան զինվորներից մեկը, տեսնելով այդ, լցվում է Քրիստոսի հավատով և նետվելով լիճը, պսակակից դառնում նրանց: Աստվածային հրաշքով ձմեռային սառնամանիքին դիմակայած վկաներն առավոտյան նահատակվում են: Նրանց նշխար-ներն ամփոփվում են Սեբաստիայում, որտեղ եւ հետագայում կառուցվում է «Քառասուն մանկունք» 40 գմբեթանի տաճարը, որ կանգուն է եղել մինչեւ Լենկթեմուրի արշավանքը: 40 մանկանց պատմությունը հորդորում է կյանքի բոլոր դժվարությունների մեջ անգամ հավատ-արիմ մնալ Քրիստոսի հավատին, հաղթահարել դուրսահան գայթակ-դությունները՝ երկնային պսակին արժանանալու համար:



MEDIAN DAY OF GREAT LENT (*MEEJEENK*)

As established by Archbishop Malachia Ormanian, the 24th day (or the fourth Wednesday) of Great Lent marks the halfway point of this most sacred season. From the halfway point forward, a number of hymns written by the composer Stegh are sung during the Peace Service held in the evenings on Mondays, Tuesdays and Thursdays. Another *Meejeenk* custom involves a folk tradition in which the housewife of every household bakes an unleavened cake and puts a coin in it while baking. The rest of the year will be successful for the family member who finds this coin in his/her portion of the cake.



ՄԻՋԻՆՔ

Ըստ Մաղաքիա արք.Օրմանյանի՝ Միջինք անունը տրվում է Մեծ պասք կիսող օրվան, որը տոնական նշանակություն չունի: Միջինք է Դ (չորրորդ) չորեքշաբթի կամ Մեծ պասի 24-րդ օրը: Միջինքից սկսած՝ Խաղաղական ժամերգության ընթացքում սկսում են երգվել Ստեղի շարականները՝ հավուր պատշաճի:

Այդ օրը, ըստ ժողովրդական ավանդության՝ հայ տանտիկիները թխում են քաղաքջ, որի մեջ մետաղադրամ են դնում: Ում բաժին ընկնի այդ դրամը, այդ տարի հաջողություն կունենա:



SCRIPTURE READINGS

Եսայու մարգարեությունը 56:1-57:20

1 Այսպես է ասում Տէրը. «Պահպանեցէ՛ք իրաւունքը եւ կատարեցէ՛ք արդարութիւնը, քանզի եկել հասել է իմ փրկութիւնը, եւ յայտնուելու է իմ ողորմութիւնը: 2 Երանի՛ այն մարդուն, որ կանի այդ, եւ նրան, որ հաւատարիմ կմնայ դրան, կպահի իմ շաբաթներն ու չի պղծի եւ իր ձեռքը ետ կքաշի անիրաւութիւն անելուց»: 3 Օտարագգին, որ եկել յարել է Տիրոջը, թող չասի, թէ՛ «Տէրը մերժեց ու վանեց ինձ իր ժողովրդից», եւ ներքինին էլ թող չասի, թէ՛ «Ես չոր փայտ եմ»: 4 Այսպես է ասում Տէրը ներքինիներին. «Ուրբեր կպահեն իմ պատուիրանները, կնախընտրեն այն, ինչ ես եմ կամենում, եւ իմ ուխտի մէջ կմնան, 5 նրանց իմ տան մէջ եւ իմ պարսպի ներսում աւելի անուանի տեղ կտամ, քան որդիներին ու դուստրերին, կտամ նրանց յաւիտենական մի անուն, որ չի կորչելու: 6 Իսկ այն այլագգիներին, որոնք եկել յարել են Տիրոջը, որպէսզի ծառայեն նրան եւ սիրեն նրա անունը, լինեն նրա համար ծառաներ եւ աղախիներ, ու բոլոր նրանց, որոնք կպահեն իմ շաբաթները եւ չեն պղծի ու կմնան իմ ուխտի մէջ, 7 նրանց կտանեմ իմ սուրբ լեռը, կուրախացնեմ նրանց իմ աղօթքի տան մէջ, նրանց ողջակէզներն ու ընծաներն ընդունելի կլինեն իմ սեղանի վրայ, քանզի իմ տունը բոլոր հեթանոսների համար աղօթքի տուն պիտի կոչուի»: 8 Այսպես է ասում Տէր Աստուած, որ հաւաքում է Իսրայէլի բոլոր ցրուածներին. «Նրանց վրայ ես պիտի հաւաքեմ անապատի բոլոր գազանների բազմութիւնները»: 9 Եկէ՛ք կերէ՛ք, ո՛վ դուք անտառի բոլոր գազաններ: 10 Տեսէ՛ք, ամէնքն էլ կուրացել են եւ չգիտեն, թէ ինչ է իմաստութիւնը. ամէնքն էլ կարծես համբացած շներ են, որ չեն կարողանում հաչել, իրենց անկողիններում երագներով են տարուած, սիրում են նիքիել: 11 Իրենց հոգով լիրբ եղան շների նման, որ անկուշտ են, չար են եւ չգիտեն, թէ ինչ է իմաստութիւնը. ամէնքն իրենց ճանապարհներով գնացին: 12 «Եկէ՛ք,– ասում եմ,– գինի առնենք եւ հարբենք գինով. այդպիսի օրը մեզ համար ամենամեծ գոհաբերութիւնը կլինի»:

57 1 «Տեսէ՛ք՝ ինչպէ՛ս կորաւ արդարը, եւ չկայ մէկը, որ սրտով կարեկցի. արդար մարդիկ վերանում են, եւ ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում, որ արդարն անիրաւութեան պատճառով է վերանում: 2 Թող խաղաղ լինի նրա գերեզմանը, ով վերացաւ մէջտեղից: 3 Բայց դուք մօտեցէ՛ք, առա՛ջ եկէ՛ք, անօրէ՛ն որդիներ, պոռնկածի՛ն որդիներ, շնութեա՛ն որդիներ: 4 Ինչո՞վ էք պարծենում, ո՞ւմ վրայ էք բացում ձեր բերանները եւ կամ ո՞ւմ վրայ էք հանում ձեր լեզուները. մի՞թէ դուք կորստեան որդիներ չէք, անօրինութեան սերունդ, 5 որ անտառախիտ ծառերի տակ ընկած՝ աղաչում էիք ձեր կուռքերին, անդունդներում, ժայռերի կատարներին եւ խոր ձորերում գոհում էիք ձեր որդիներին:

6 Այդ է քո բաժինը, այդ նոյնն է քո վիճակը. նրանց առաջ նուէրներ թափեցիր, նրանց զոհեր մատուցեցիր, եւ այս ամէնի վրայ մի՛թէ չեմ բարկանալու,– ասում է Տէրը:– 7 Այնտեղ, բարձր ու մեծ լեռան վրայ է քո անկողինը, եւ դու այնտեղ ելար զոհեր մատուցելու: 8 Ապա դռների դրանդիների վրայ հաստատեցիր քո յիշատակները: Կարծում էիր՝ եթէ ինձնից հեռանաս, աւելի բա՛ն պիտի գտնես: Քո անկողինները լայնացրիր եւ փռուցիր դրանց վրայ. սիրեցիր քո հոմանիներին 9 եւ յաճախակի դարձրիր քո պոռնկութիւնը նրանց հետ: Հեռաւորներից շատերին քեզ կապեցիր եւ պատգամաւորներ ուղարկեցիր քո սահմաններից դուրս: 10 Նկուն դարձար ու իջար գերեզման, յոգնատանջ եղար քո բազում ճանապարհորդութիւններից եւ չասացիր, թէ՝ “Այժմ հանգստանամ”, որովհետեւ ուժիդ համեմատ էիր գործում, դրա համար էլ չհնազանդուցիր ինձ: 11 Ումի՛ց վախեցար ու զարհուրեցիր, որ ստեցիր եւ ջիշեցիր ինձ, միտքդ չբերեցիր, սրտիդ մէջ չդրեցիր, իսկ ես քեզ տեսայ ու անտեսեցի: Ես այն եմ, որ յաւիտենական եմ, իսկ դու ինձնից չվախեցար: 12 Արդ, ես պիտի պատմեմ իմ արդարութեան եւ քո չարիքների մասին, 13 որոնք քեզ չեն օգնելու, երբ աղաղակես, եւ քեզ չեն փրկելու քո նեղութիւնից. դրանց բոլորին հողմերը պիտի տանեն, եւ մրրիկները բաժան-բաժան պիտի անեն: Իսկ նրանք, ովքեր ինձ վրայ են յոյս դրել, պիտի ստանան երկիրը եւ ժառանգեն իմ սուրբ լեռը: 14 Նրանք պիտի ասեն. “Բացէ՛ք նրա առաջ ճանապարհները, խոչ ու խութերը հեռացրէ՛ք իմ ժողովրդի ճանապարհից”»: 15 Այսպէս է ասում Բարձրեալը, որ յաւիտենապէս բնակւում է բարձունքներում, Սուրբը սրբերի մէջ. նրա անունը Բարձրեալ է, եւ նա սրբերի մէջ է մնում, համբերութիւն է տալիս տարակուսանքի մէջ ընկածներին եւ կեանք՝ նրանց, որոնք սրտամաշ են եղել: 16 «Ես յաւիտեան վրէժխնդիր չեմ լինելու ձեզնից եւ ոչ էլ մշտապէս բարկանալու եմ ձեզ վրայ, քանզի հոգին ինձնից է բխում, եւ ամէն շունչ ես եմ ստեղծել: 17 Մեղքի պատճառով սակաւ ժամանակ տրտմութիւն հասցրի նրան, հարուածեցի նրան ու իմ երեսը շրջեցի նրանից, եւ նա տրտմեց ու իմ առաջ թախծոտ անցաւ իր ճանապարհները: 18 Ես տեսայ նրա սրտի ճանապարհները եւ բժշկեցի նրան, սփռեցի ու ճշմարիտ մխիթարութիւն տուցի նրան: Նրա սգաւորների համար պտուղ ստեղծեցի: 19 Թող խաղաղութիւն, խաղաղութիւն լինի հեռաւորներին եւ մերձաւորներին,– ասում է Տէրը,– ու ես պիտի բժշկեմ նրանց: 20 Իսկ անօրէնները պիտի ծփան ծովի նման եւ հանգիստ չգտնեն, ու նրա ջրերը պիտի անհետանան՝ կաւի հետ խառնուելով: Ամբարիշտների համար խաղաղութիւն չկայ»,– ասում է Տէրը:

Եփեսացիներ 4:17-5:14

15 Կապա՝ ճշմարտութիւնը խօսելով սիրոյ մէջ, ամէն բանի մէջ անհինք անո՛վ՝ որ գլուխն է, այսինքն՝ Քրիստոսով: 16 Անով է որ ամբողջ մարմինը, յարմարութեամբ միասին կազմուած եւ իրարու կցուած ամէն յօդի օժանդակութեամբ՝ ամէն մասի ներգործութեան չափին համեմատ, կ'անի սիրոյ մէջ՝ իր շինութեան համար: 17 Ուրեմն սա՛ կը յայտարարեմ ու Տէրոջմով կը վկայեմ, որ դուք այլեւս չընթանաք այնպէս՝ ինչպէս ուրիշ հեթանոսները կ'ընթանան, իրենց միտքին ունայնութեան մէջ: 18 Անոնց միտքը խաւարած է, եւ իրենք ուժացած են Աստուծոյ կեանքէն՝ իրենց մէջ եղած անգիտութեան եւ իրենց սիրտին կուրութեան պատճառով: 19 Անգգայ դարձած՝ անձնատուր եղան ցոփութեան, որպէսզի ամէն տեսակ անմաքրութիւն գործեն ազահութեամբ: 20 Բայց դուք ա՛յսպէս չսորվեցաք Քրիստոսը, 21 եթէ իսկապէս լսեցիք զինք եւ սորվեցաք իրմէ՝ Յիսուսի մէջ եղող ճշմարտութեան համաձայն՝ 22 որպէսզի թօթափէք ձեր նախկին վարքին վերաբերող հին մարդը, - որ ապականած է խաբերայ ցանկութիւններով, - 23 նորոգուիք ձեր միտքին հոգիով, 24 ու հագնիք նո՛ր մարդը, որ ստեղծուած է արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ՝ Աստուծոյ պատկերին համաձայն: 25 Ուստի՝ թօթափելով ստեղը՝ ճշմարտութիւնը խօսեցէք իրարու հետ՝, որովհետեւ մենք իրարու անդամներ ենք: 26 Բարկացէ՛ք, բայց մի՛ մեղանչէք. արեւը թող մայր չմտնէ ձեր բարկացած վիճակին վրայ, 27 ու տեղ մի՛ տաք Չարախօսին: 28 Ա՛ն որ կը զողնար՝ ա՛լ թող չզողնայ. այլ մանաւանդ թող աշխատի՝ իր ձեռքերով գործելով ինչ որ բարի է, որպէսզի բան մը ունենայ տալու կարօտեալին: 29 Ո՛չ մէկ վատ խօսք թող ելլէ ձեր բերանէն, կապա՝ ինչ որ բարի է, շինութեան կարիքին համեմատ, որպէսզի շնորհք տայ լսողներուն: 30 Եւ մի՛ տրտմեցնէք Աստուծոյ Սուրբ Հոգին, որով դուք կնքուեցաք ազատագրութեան օրուան համար: 31 Ամէն տեսակ դառնութիւն, գայրոյթ, բարկութիւն, գոչիւն ու հայհոյութիւն թող վերցուին ձեզմէ՝ ամէն տեսակ չարամտութեան հետ: 32 Եւ քա՛ղցր եղէք իրարու հանդէպ, գթած, ներելով իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսով ներեց ձեզի:

1 Ուրեմն նմանեցէ՛ք Աստուծոյ՝ սիրելի զաւակներու պէս, 2 եւ ընթացէ՛ք սիրոյ մէջ, ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց ու մեզի համար ընծայեց ինքզինք Աստուծոյ՝ որպէս պատարագ ու զոհ, անուշաբոյր հոտ ըլլալով:

3 Բայց պոռնկութեան եւ ամէն տեսակ անմաքրութեան կամ ազահութեան անունն իսկ թող չիշուի ձեր մէջ, (ինչպէս կը պատշաճի սուրբերուն,) 4 ո՛չ ալ լրբութեան, յիմար խօսակցութեան կամ խեղկատակութեան, որոնք չեն պատշաճիր. այլ փոխարէնը շնորհակալութիւն յայտնեցէք: 5 Քանի որ գիտէք՝ թէ ո՛չ մէկ պոռնկող,

կամ անմաքուր, կամ ազահ, որ կռապաշտ է, ունի որեւէ ժառանգութիւն Քրիստոսի եւ Աստուծոյ թագաւորութեան մէջ:

6Ո՛հ մէկը թող խաբէ ձեզ ունայն խօսքերով, որովհետեւ այս բաներուն պատճառով Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ: 7Ուրեմն բաժնեկից մի՛ ըլլաք անոնց, 8որովհետեւ ժամանակին դուք խաւար էիք, բայց հիմա յոյս էք Տէրոջմով. ուստի ընթացէ՛ք յոյսի գաւակներու պէս, 9քանի որ Հոգիին պտուղը ամէն տեսակ բարութեամբ, արդարութեամբ ու ճշմարտութեամբ է: 10Քննեցէ՛ք թէ ի՞նչ է Տէրոջ հաճելին, 11եւ ընկերակից մի՛ ըլլաք խաւարին անպտուղ գործերուն, այլ փոխարէնը կշտամբեցէ՛ք զանոնք: 12Որովհետեւ անոնց ըրած գաղտնի բաներուն մասին խօսին իսկ ամօթ է. 13բայց ամէն բան որ կշտամբուած է՝ կը յայտնաբերուի յոյսին միջոցով, որովհետեւ յոյսն է որ կը յայտնաբերէ ամէն ինչ: 14Ուստի կ'ըսէ. «Արթնցի՛ր, դուն որ կը քնանաս, ու կանգնէ՛ մեռելներէն, եւ Քրիստոս պիտի փայլի քու վրադ»: 15Ուրեմն զգուշացէ՛ք որ ընթանաք շրջահայեցութեամբ. ո՛չ թէ անխոհեմներու պէս, 16հապա՛ իմաստուններու պէս: Գնեցէ՛ք ժամանակը, որովհետեւ օրերը չար են: 17Ուստի անմիտ մի՛ ըլլաք, հապա հասկցէ՛ք թէ ի՞նչ է Տէրոջ կամքը:

Ղուկաս 16:1-31

1Իր աշակերտներուն ալ ըսաւ. «Հարուստ մարդ մը կար՝ որ տնտես մը ունէր. ասիկա ամբաստանուեցաւ անոր առջեւ՝ որպէս թէ կը փճացնէ անոր ինչքը: 2Ուստի կանչեց զայն եւ ըսաւ անոր. “Այս ի՞նչ է՝ որ քու մասիդ կը լսեմ. տնտեսութեանդ հաշի՛ւը տուր, որովհետեւ ա՛յ չես կրնար տնտես ըլլալ”: 3Տնտեսը ըսաւ ինքնիրեն. “Ի՞նչ ընեմ, որովհետեւ տէրս տնտեսութիւնը կ'առնէ ինձմէ. չեմ կրնար հողագործ ըլլալ”, կ'ամչնամ մուրաւ: 4Գիտե՛մ ինչ պիտի ընեմ, որպէսզի երբ հեռացուիմ իմ տնտեսութենէս՝ ընդունին զիս իրենց տունը: 5Եւ իրեն կանչելով իր տիրոջ պարտապաններէն իւրաքանչիւրը, ըսաւ առաջինին. “Դուն ո՞ր-չափ կը պարտիս իմ տիրոջս”: 6Ան ալ ըսաւ. “Հարիւր մար ձեթ”: Ըսաւ անոր. “Ա՛ռ մուրհակդ, ու շուտով նստէ՛ «յիսո՛ւն» գրէ”: 7Յետոյ ըսաւ միւսին. “Դո՛ւն ո՞րչափ կը պարտիս”: Ան ալ ըսաւ. “Հարիւր քոռ ցորեն”: Ըսաւ անոր. “Ա՛ռ մուրհակդ եւ «ութսո՛ւն» գրէ”: 8Տէրը գովեց անիրաւ տնտեսը՝ որ ուշիմութեամբ վարուեցաւ. որովհետեւ այս աշխարհի որդիները ասելի՛ ուշիմ են իրենց սերունդին մէջ՝ քան յոյսի որդի-ները: 9Ես ալ կ'ըսեմ ձեզի. “Բարեկամներ ըրէք ձեզի անիրաւ մամոնայէն, որպէսզի երբ ան պակսի”, ընդունին ձեզ յաւիտենական բնակարաններու մէջ”:

10Ա՛ն որ ամենափոքր բանին մէջ հաւատարիմ է՝ շատին մէջ ալ հաւատարիմ կ'ըլլայ, եւ ա՛ն որ ամենափոքրին մէջ անիրաւ է՝ շատին մէջ ալ անիրաւ կ'ըլլայ: 11Ուրեմն եթէ անիրաւ մամոնային մէջ

հաւատ-արիմ չըլլաք, ճշմարիտ հարստութիւնը ո՛վ պիտի վստահի ձեզի: 12Եթէ ուրիշին բանին մէջ հաւատարիմ չըլլաք, ձե՛րը ո՛վ պիտի տայ ձեզի: 13Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ կա՛մ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկուն պիտի յարի՝ ու միւսը արհամարիէ: Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

14Փարիսեցիներն ալ՝ որոնք արծաթասէր էին, այս բոլոր բաները լսելով՝ կը քամահրէին զայն: 15Եւ ըսաւ անոնց. «Դո՛ւք էք որ մարդոց առջեւ կ'արդարացնէք դուք ձեզ, բայց Աստուած գիտէ՝ ձեր սիրտերը. որովհետեւ մարդոց մէջ բարձր գնահատուածը՝ զարշէլի է Աստուծոյ առջեւ:

16Օրէնքն ու Մարգարէները մինչեւ Յովհաննէս էին. այդ ատենէն ետք Աստուծոյ թագաւորութիւնը կ'աւետուի, եւ ամէն մէկը կ'արտոքայ մտնել անոր մէջ: 17Աւելի դիւրին է՝ որ երկինքն ու երկիրը անցնին, քան Օրէնքէն մէկ նշանագիր իյնայ:

18Ո՛վ որ կ'արձակէ իր կինը եւ կ'ամուսնանայ ուրիշի մը հետ՝ շնութիւն կ'ընէ, եւ ո՛վ որ կ'ամուսնանայ իր ամուսինէն արձակուած կնոջ մը հետ՝ շնութիւն կ'ընէ»:

19«Հարուստ մարդ մը կար՝ որ ծիրանի ու բեհեզ կը հագնէր, եւ ամէն օր փառահեղ խրախճանք կը սարքէր»։ 20Ղազարոս անունով աղքատ մըն ալ կար՝ պալարներով ծածկուած, որ պառկած էր անոր դրան քով, 21ու կը ցանկար կշտանալ հարուստին սեղանէն ինկած փշրանքներէն. նաեւ շուներն ալ կու գային եւ կը լզէին անոր պալարները: 22Այդ աղքատը մեռաւ, ու հրեշտակները Աբրահամի գոգը տարին զայն: Հարուստն ալ մեռաւ եւ թաղուեցաւ: 23Մինչ դժոխքը՝ տանջանքի մէջ էր, իր աչքերը բարձրացնելով՝ հեռուէն տեսաւ Աբրահամը, ու Ղազարոսը՝ անոր գոգը հանգիստ նստած: 24Ուստի գոչեց. «Հա՛յր Աբրա-համ, ողորմէ՛ ինծի ու դրկէ՛ Ղազարոսը, որպէսզի ջուրի մէջ թաթխէ իր մատին ծայրը եւ գովացնէ լեզուս, որովհետեւ կը տանջուիմ այս բոցին մէջ»։ 25Աբրահամ ըսաւ. «Որդեա՛կ, յիշէ՛ թէ դուն կեանքիդ ընթացքին ստացար բարիքներդ, նմանապէս Ղազարոս՝ չարիքներ. Հիմա ան (հոս) կը մխիթարուի, ու դուն կը տանջուիս: 26Այս բոլորէն զատ՝ մեր եւ ձեր մէջտեղ հաստատուած մեծ անդունդ մը կայ, որպէսզի ասկէ ձեզի անցնիլ ուզողները չկարենան, ո՛չ ալ ատկէ մեզի գալ ուզողները՝ անցնին»։ 27Ան ալ ըսաւ. «Ուրեմն կը խնդրեմ քեզմէ, հա՛յր, որ դրկես զայն հօրս տունը, 28քանի որ հինգ եղբայր ունիմ. որպէսզի վկայէ անոնց, որ անոնք ալ չգան այս տանջանքի տեղը»։ 29Աբրահամ ըսաւ անոր. «Անոնք ունին Մովսէսն ու մարգարէները, թող անո՛նց մտիկ ընեն»։ 30Ան ալ ըսաւ. «Ո՛չ, հա՛յր Աբրահամ. հապա եթէ մեռել-ներէ՛ն մէկը երթայ անոնց՝ պիտի ապաշխարեն»։ 31Իսկ ան ըսաւ անոր. «Եթէ մտիկ չեն ըներ Մովսէսի եւ մարգարէներուն, պիտի չհամոզուին՝ նոյնիսկ եթէ մէկը մեռելներէն յարութիւն առնէ»»:

Isaiah 54:11-55:13

Thus says the Lord: “Keep justice, and do righteousness, for soon my salvation will come, and my deliverance be revealed. Blessed is the man who does this, and the son of man who holds it fast, who keeps the sabbath, not profaning it, and keeps his hand from doing any evil.”

Let not the foreigner who has joined himself to the Lord say, “The Lord will surely separate me from his people”; and let not the eunuch say, “Behold, I am a dry tree.” For thus says the Lord: “To the eunuchs who keep my sabbaths, who choose the things that please me and hold fast my covenant, I will give in my house and within my walls a monument and a name better than sons and daughters; I will give them an everlasting name which shall not be cut off.

“And the foreigners who join themselves to the Lord, to minister him, to love the name of the Lord, and to be his servant, every one who keeps the sabbath, and does not profane it, and holds fast my covenant—these I will bring to my holy mountain, and make them joyful in my house of prayer; their burnt offerings and their sacrifices will be accepted on my altar; for my house shall be called a house of prayer for all peoples. Thus says the Lord God, who gathers the outcasts of Israel, I will gather yet others to him besides those already gathered.”

All you beasts of the field, come to devour—all you beasts in the forest. His watchmen are blind, they are all without knowledge; they are all dumb dogs, they cannot bark; dreaming, lying down, loving to slumber. The dogs have a mighty appetite; they never have enough. The shepherds also have no understanding; they have all turned to their own way, each to his own gain, one and all. “Come,” they say, “Let us get wine, let us fill ourselves with strong drink; and tomorrow will be like this day, great beyond measure.”

The righteous man perishes, and no one lays it to heart; devout men are taken away, while no one understands. For the righteous man is taken away from calamity, he enters into peace; they rest in their beds who walk in their uprightness. But you, draw near hither, sons of the sorceress, offspring of the adulterer and the harlot. Or whom are you making sport? Against whom do you open your mouth wide and put out your tongue? Are you not children of transgression, the offspring of deceit, you who burn with lust among the oaks, under every green tree; who slay your children in the valleys, under the clefts of the rocks? Among the smooth stones of the valley is your portion; they, they, are your lot; to them you have poured out a drink offering, you have brought a cereal offering. Shall I be appeased for these things? Upon a high and lofty mountain you have set your bed, and thither you went up to offer sacrifice. Behind the door and the doorpost you have set up your symbol; for, deserting me, you have uncovered your bed, you have gone up to it, you have made it wide; and you have made a bargain for yourself with them, you have loved their bed, you have looked on nakedness. You journeyed to Molech with oil and multiplied your perfumes; you sent your envoys far off, and sent down even to Sheol. You were wearied with the length of your way, but you did not say, “It is hopeless”; you found new life for your strength, and so you were not faint.

Whom did you dread and fear, so that you lied, and did not remember me, did not give me a thought? Have I not held my peace, even for a long time, and so you do not fear me? I will tell of your righteousness and your doings, but they will not help you. When you cry out, let your collection of idols deliver you! The wind will carry them off, a breath will take them away. But he who takes refuge in me shall possess the land, and shall inherit my holy mountain.

And it shall be said, “Build up, build up, prepare the way, remove every obstruction from my people's way.” For thus says the high and lofty One who inhabits eternity, whose name is Holy: “I dwell in the high and holy place, and also with him who is of a contrite and humble spirit, to revive the spirit of the humble, and to revive the heart of the contrite. For I will not contend forever, nor will I always be angry; for from me proceeds the spirit, and I have made the breath of life. Because of the iniquity of his covetousness I was angry, I smote him, I hid my face and was angry; but he went on backsliding in the way of his own heart. I have seen his ways, but I will heal him; I will lead him and requite him with comfort, creating for his mourners the fruit of the lips. Peace, peace, to the far and to the near, says the Lord; and I will heal him. But the wicked are like the tossing sea; for it cannot rest, and its waters toss up mire and dirt. There is no peace, says my God, for the wicked.”

Ephesians 4:17-5:14

Now this I affirm and testify in the Lord, that you must no longer live as the Gentiles do, in the futility of their minds; they are darkened in their understanding, alienated from the life of God because of the ignorance that is in them, due to their hardness of heart; They have become callous and have given themselves up to licentiousness, greedy to practice every kind of uncleanness. You did not so learn Christ!—assuming that you have heard about him and were taught in him, as the truth is in Jesus. Put off your old nature which belongs to your former manner of life and is corrupt through deceitful lusts, and be renewed in the spirit of your minds, and put on the new nature, created after the likeness of God in true righteousness and holiness.

Therefore, putting away falsehood, let everyone speak the truth with his neighbor, for we are members one of another. Be angry but do not sin; do not let the sun go down on your anger, and give no opportunity to the devil. Let the thief no longer steal, but rather let him labor, doing honest work with his hands, so that he may be able to give to those in need. Let no evil talk come out of your mouths, but only such as is good for edifying, as fits the occasion, that it may impart grace to those who hear. And do not grieve the Holy Spirit of God, in whom you were sealed for the day of redemption. Let all bitterness and wrath and anger and clamor and slander be put away from you, with all malice, and be kind to one another, as God in Christ forgave you.

Therefore be imitators of God, as beloved children. And walk in love, as Christ loved us and gave himself up for us, a fragrant offering and sacrifice to God. But fornication and all impurity or covetousness must not even be named among you, as is fitting among saints. Let there be no filthiness, nor silly talk, nor levity, which are not fitting; but instead let there be thanksgiving. Be sure of

this, that no fornicator or impure man, or one who is covetous (that is, an idolater), has any inheritance in the kingdom of Christ and of God. Let no one deceive you with empty words, for it is because of these things that the wrath of God comes upon the sons of disobedience. Therefore do not associate with them, for once you were darkness, but now you are light (for the fruit of light is found in all that is good and right and true), and try to learn what is pleasing to the Lord. Take no part in the unfruitful works of darkness, but instead expose them. For it is a shame even to speak of the things that they do in secret; but when anything is exposed by the light it becomes visible, for anything that becomes visible is light. Therefore it is said, "Awake, O sleeper, and arise from the dead, and Christ shall give you light."

Luke 16:1-31

He also said to the disciples, "There was a rich man who had a steward, and charges were brought to him that this man was washing his goods. And he called him and said to him, 'What is this that I hear about you? Turn in the account of your stewardship, for you can no longer be steward.' And the steward said to himself, 'What shall I do, since my master is taking the stewardship away from me? I am not strong enough to dig, and I am ashamed to beg. I have decided what to do, so that people may receive me into their houses when I am put out of the stewardship.' So, summoning his master's debtors one by one, he said to the first, 'How much do you owe my master?' He said, 'A hundred measures of oil.' And he said to him, 'Take your bill, and sit down quickly and write fifty.' Then he said to another, 'And how much do you owe?' He said, 'A hundred measures of wheat.' He said to him, 'Take your bill, and write eighty.' The master commended the dishonest steward for his shrewdness; for the sons of this world are more shrewd in dealing with their own generation than the sons of light. And I tell you, make friends for yourselves by means of unrighteous mammon, so that when it fails they may receive you into the eternal habitations.

"He who is faithful in a very little is faithful also in much; and he who is dishonest in a very little is dishonest also in much. If then you have not been faithful in the unrighteous mammon, who will entrust to you the true riches? and if you have not been faithful in that which is another's, who will give you that which is your own? No servant can serve two masters: for either he will hate the one and love the other, or he will be devoted to the one and despise the other. You cannot serve God and mammon."

The Pharisees, who were lovers of money, heard all this, and they scoffed at him. But he said to them, "You are those who justify yourselves before men, but God knows your hearts; for what is exalted among men is an abomination in the sight of God.

"The law and the prophets were until John; since then the good news of the kingdom of God is preached, and every one enters it violently. But it is easier for heaven and earth to pass away, than for one dot of the law to become void.

"Every one who divorces his wife and marries another commits adultery, and he who marries a woman divorced from her husband commits adultery.

"There was a rich man, who was clothed in purple and fine linen and who feasted sumptuously every day. And at his gate lay a poor man named Lazarus,

full of sores, who desired to be fed with what fell from the rich man's table; moreover the dogs came and licked his sores. The poor man died and was carried by the angels to Abraham's bosom. The rich man also died and was buried; and in Hades, being in torment, he lifted up his eyes, and saw Abraham far off and Lazarus in his bosom. And he called out, 'Father Abraham, have mercy upon me, and send Lazarus to dip the end of his finger in water and cool my tongue; for I am in anguish in this name.' But Abraham said, 'Son, remember that you in your lifetime received your good things, and Lazarus in like manner evil things; but now he is comforted here, and you are in anguish. And besides all this, between us and you a great chasm has been fixed, in order that those who would pass from here to you may not be able, and none may cross from there to us. And he said, 'Then I beg you, father, to send him to my father's house, for I have five brothers, so that he may warn them, so that they will not also come into this place of torment.' But Abraham said, 'They have Moses and the prophets; let them hear them.' And he said, 'No, father Abraham; but if some one goes to them from the dead, they will repent.' He said to him, 'If they do not hear Moses and the prophets, neither will they be convinced if some one should rise from the dead.'"

SCRIPTURE READINGS FOR THIS WEEK

Monday	Jeremiah 32:19-44
Tuesday	Job 38:1-39:36
Wednesday	Exodus 3:16-22; Joel 3:1-8
Thursday	1 Corinthians 8:5-9:23
Friday	Deuteronomy 9:11-23; Job 16:1-17:16; Isaiah 43:22-44:8
Saturday	Wisdom 3:1-8; Nahum 2:1-4; Isaiah 43:1-3; Ephesians 6:10-18 Matthew 13:43-52

YOUTH BIBLE STUDY

Thursdays, March 11 at 7 PM

Meeting ID: 938 614 7474

Questions? Want to participate?

Contact Youth Director

Ms. Irina Petrosyan at (630) 843-1304

PLEASE RECYCLE THIS BULLETIN

St. James Church is committed to Creation care. Please recycle this bulletin by taking it with you and use the information throughout the week or leave it at the back of the sanctuary. You can also deposit it in the recycling receptacle in the Nishan Hall as you leave. **Thank you!**



Writing above altar:

"Draw near to God, and He will draw near to you" (*James 4:8*)